

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ԱՆԱՇՆԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հոկտեմբերի 27-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասում «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» բառերը փոխարինել «Եկամտային հարկի մասին» բառերով:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածում.

1) 1-ին մասի 2-րդ կետը «ծեռնարկատերերը» բառից հետո լրացնել «, բացառությամբ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված N 1-ի և հավելված N 2-ի ցանկերի համաձայն արտոնագրային վճար վճարող անհատ ծեռնարկատերերի» բառերով,

2) 2-րդ մասում «պարտադիր սոցիալական ապահովության վճարներ (այսուհետ՝ սոցիալական վճարներ) կատարած» բառերը փոխարինել «եկամտային հարկ վճարած» բառերով:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում «սոցիալական վճարներ կատարած» բառերը փոխարինել «եկամտային հարկ վճարած» բառերով:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածում.

1) 2-րդ մասի 1-ին պարբերությունից հանել «որը չի փոխհատուցվում,» բառերը.

2) 3-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 5. Օրենքի 22-րդ հոդվածում.

1) 2-րդ մասի 2-րդ պարբերությունում և 3-րդ մասում «սոցիալական վճարների» բառերը փոխարինել «եկամտային հարկի» բառերով,

2) 6-րդ մասի 2-րդ կետում «կատարել է ամսական նվազագույն սոցիալական վճարներ» բառերը փոխարինել «օրենքով սահմանված կարգով վճարել է եկամտային հարկ (հաստատագրված վճար)» բառերով:

Հոդված 6. Օրենքի 24-րդ հոդվածում.

1) 1-ին մասի 2-րդ պարբերությունում «սոցիալական վճարների» բառերը փոխարինել «եկամտային հարկի» բառերով,

2) 1-ին մասի 3-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Եթե տվյալ ամսվա համար հաշվարկված եկամտային հարկը բավարար չէ նպաստի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վճարման ենթակա գումարները վճարելու համար, ապա գործատունն նպաստի պակասող մասը վճարում է իր միջոցներից: Այդ գումարները համարվում են եկամտային հարկի հարկային պարտավորություններից ավել վճարված գումար և հաշվանցվում են հարկ վճարողի՝ հետագա ամսվա (ամիսների) եկամտային հարկի պարտավորությունների հաշվին:»,

3) 1-ին մասի 4-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Եթե գործատունն օրենքով սահմանված կարգով ազատված է հարկային գործակալի պարտավորությունից, ապա նպաստի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վճարման ենթակա գումարները վարձու աշխատողին նշանակում և վճարում է լիազոր մարմինը:»:

Հոդված 7. Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունից հանել «և սոցիալական վճարների գծով ունեցած» բառերը:

Հոդված 8. Օրենքի 28-րդ հոդվածում.

1) 1-ին մասի 1-ին կետում «սոցիալական վճարների» բառերը փոխարինել «եկամտային հարկի» բառերով,

2) 2-րդ մասի 2-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

Մինչև օրենքն ուժի մեջ մտնելը վարձու աշխատողների նպաստների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վճարման ենթակա գումարները վճարելու համար գործատուի կատարած ծախսը փոխհատուցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձը հաշվարկելիս, հաշվարկային ժամանակահատվածի 2012 թվականի ամիսների (կամ հաշվարկային ժամանակահատվածի ամիսների փոխարեն հաշվառվող ամիսների)՝ եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ համարվող եկամուտ է համարվում այդ ամիսների համար գործատուի կողմից հաշվարկված՝ օրենքով սահմանված սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովության վճարների հանրագումարը:

2013 թվականին առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահոված անձանց նպաստները հաշվարկելիս՝ միջին ամսական եկամուտը հաշվարկվում է 2012 թվականի՝ օրենքով սահմանված սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտ համարվող եկամուտը, բացառությամբ վարձակալության պայմանագրի հիման վրա ստացած եկամտի, տասներկուսի բաժանելու միջոցով: